ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 08.04.2019թ.

Ժամը 11^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲՎ պետի տեղակալ Ա.Մուրադյանը,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲՎ ՋԲՖԿ ծառայության պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյանը,

ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲՎ ԿՀՄՇՀ գլխավոր մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի խորհրդական Ն. Խաչիկյանը,

բացողներ՝

ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲՎ ՋԲ գլխավոր մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի խորհրդական Ա. Համբարձումյանը,

ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲՎ ՋԲՖՇԲ առաջատար մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի առաջատար ծառայող Ռ. Չաթոյանը,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Ա. Սահակյանը:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա.Սահակյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա.Սահակյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **ջեռուցման կայանների վերանորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/1» ծածկագրով մրցույթին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1	«Ջերմգազշին» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա.Սահակյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա.Սահակյան)

3.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՇՁԲ-10/1» ծածկագրով մրցույթի շրջանակներում գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները

ՀՀ դրամ

Հ/հ	Աշխատանքի անվանումը	Նախահաշվային գինը /միավորի գների հանրագումարը/	«Ջերմգազշին» ՍՊԸ	
			Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Ջեռուցման կայանների վերանորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքներ	**33 220 402**	**26 991 575**	**32 389 890**

Ներկայացված են ծավալաթերթով նախատեսված աշխատանքների (առանձին տողերի) համար մասնակիցների կողմից առաջարկվող միավորի գների հանրագումարի արդյունքում ստացվող թվերը:

3.2 «Ջերմգազշին» ՍՊԸ-ի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 **11.04.2019թ.**-ին, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.6 կետի 1-ին ենթակետը և քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից՝ «Ջերմգազշին» ՍՊԸ-ն, հանձնաժողովը որոշեց գների նվազեցման նպատակով 16.04.2019թ. ժամը 12:30-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ և նույն օրը այդ մասին էլեկտրոնային ձևով ծանուցվեց մասնակցին: Նշված օրը և ժամին «Ջերմգազշին» ՍՊԸ-ն ներկայացավ բանակցություններին: Բանակցությունների ընթացքում նշված մասնակիցը հրաժարվեց նվազեցնել առաջարկված գինը և արդյունքում մասնակցի գնային առաջարկը մնաց անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/1» ծածկագրով բաց մրցույթի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա.Սահակյան)

4.1 17.04.2019թ.-ին էլեկտրոնային գնահատման արդյունքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/1» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Ջերմգազշին» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հայտերի բացման նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած

մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն ընթացակարգի հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա.Սահակյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա.Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/1» ծածկագրով բաց մրցույթի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվելիք հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Ն. Խաչիկյան
Բացող	Ա. Համբարձումյան
Բացող	Ռ. Չաթոյան
Գնումները համակարգող	Ա.Սահակյան